strativpronomina 112 հետեւ.) ձեւերուն մէջ գտնուող այ- դերանուան արմատին հետ։

Հնդեւր. *eĝhóm "ես, ալ բան Brugmann՝ Dem. 71 = ցուցական *e- (ասկ. e-kas, յուն. ἐ-κεῖ) + ես-ցուցական (ich-deiktisch) *ĝho, *go։ Հայ. ի մէջ *եՀ ձեւը կը սպասէինք, բայց ե՛ւ ուՀինք այ--, հայ--ս ձեւերուն ս բաղաձայնին ազդեցութեան տակ, ուր ս ձայնը հնդեւր. *-ĥko- է։ Brugmann Dem. 72 կ'ենթադրէ, որ յիշեալ "ես-, ցուցական *ĝho ձեւին հհնդ. hyás ավ. ᵴyō, յուն. χθές, ἐ-χθές, լատ. heri (*hesi), hesternus, նրգերմ. ges-tevn բառերն ալ կը պատկանին։

(Շարունակելի։) ՂՈՒԿԱՍ ԲԱԴԱՐԱՊԱՆԵԱՆ

ԱԾԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ԱՐՈՐԴՈՅ ՄԱՏԵՆԱԳՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

(Շարունակութիւն։)

Գ. Տաբարի։

Աբու Ջաֆար Մ.ի Ջերիր ամ. Տաբարի ծնած է 224/838 թ. Տաբարիստանի Ամոլ քաղաքում։ Ուսումնասիրական ուղեւորութիւնից յետոյ Եգիպտոսում, Ասորիքում եւ Իրաքում (Բաբելոնում), նա հաստատեցաւ վերջապէս Բաղդադում, ուր նա՝ սկզբում իբրեւ ուսուցիչ խաֆիսի եւ Ֆեւհի՝ ապա իւր սեպհական դպրոցը հիմնեց։ Նորա գրական գործունէութիւնն կը տարածուէր ոչ միայն պատմութեան վերայ, ուր նա առաւելապէս իբրեւ հաւատոց կը հանդիսանայ, այլ արդիւնաբեր էր նաեւ Ղուրանի մեկնութեան եւ իրաւաբանութեան մէջ։ Վախճանեցաւ Բաղդադում 310/923 թ. (Geschichte der arabischen Literatur von Carl Brockelmann, I. Band, S. 142, Weimar 1898).

Հեղինակի բազմահատոր համաշխարհային պատմական երկասիրութիւնն, աշխարհի սաեղծմանից մինչեւ նորա ժամանակը, Հիջէյրից յետոյ իբրեւ ժամանակագիր դասաւորած, լոյս է տեսել մի շարք յայտնի արաբագէտ գիտնականաց խմբագրութեամբ հետեւեալ տիտղոսի տակ՝ Annales quae scripsit Abu Djafar M. b. Djarir at-Tabari cum aliis ed. de Goeje, 3 series, Lugd. Bat. 1879 – 98.

Հայաստանի մասին առաջ բերած տեղեկութիւնները՝ թէեւ ոչ հարուստ՝ զգալի կերպով կը տարբերին Բէլազորիի վկայութիւնից, քաղուած լինելով շատ անգամ բոլորովին տարբեր՝ թէ գրաւոր եւ թէ անգիր՝ աղբիւրներից։

Միջագետոց Նուաճումն։

(V, 2505).

Ըստ Այիֆի ուսանդութեան Միջագետք նուաճեցաւ 17 թ., իսկ ըստ Ի. ԽՀակի՝ 19 թ. յետ Հիջէյրի։ Օմար գրեց Սադ Ի. Աբու Վաքքասին, թէ Աստուած նուաճեց Ասորիք եւ Իրաք մուսլիմների համար, ուստի ուղարկիր քեզանից մի զօրագունդ Միջագետք եւ նշանակիր նորա վերայ երեքից մէկին՝ Խալիդ Ի. Ուալիդին, կամ Հաշիմ Ի. Օտբայի եւ կամ Իյադ Ի. Ղանմին զրաբգլուխ։ Սադ՝ ստանալով Օմարի թուղթը՝ ուղարկեց Ղանմին մի գնդով, նորա հետ գնելով Աբու Մուսայ Աշարիին իւր որդու՝ Օմար Ի. Սադի հետ միասին եւ Օսման Ի. Աբու-լ-Ասս Ի. Բիշը Ջաքֆիին. այս բանը տեղի ունեցաւ 19 թ.։

Իյադ արշաւեց Միջագետք եւ պաշարեց Ուռհայ. քաղաքի բնակիչք խաղաղութիւն կապեցին նորա հետ գլխահարկ տալու հիման վերայ. նոյն պայմանով եւ Խառանցիք։ Ապա Իյադ ուղարկեց Աբու Մուսայ Աշարիին Մծբին, իսկ Օմար Ի. Սադին՝ Ռասելայն մուսլիմներից բաղկացած օգնական գնդով. ինքն ընտիր զօրքով գնաց Դարայ եւ պաշարմամբ գրաւեց քաղաքը. իսկ Աբու Մուսայ առաւ Մծբին։ Այս բոլորը կատարեցաւ 19 թ.։

Իյադ ուղարկեց Օսման Ի. Աբի-լ-Ասին Զորրորդ Հայք. այստեղ Սաֆիքան Ի. Մուսաթթալ Սուլամին նահանակեցաւ տեղի ունեցած մի ճակատամարտի մէջ։ Բնակիչք խաղաղութիւն հաստատեցին Օսման Ի. Աբի-լ-Ասի հետ՝ իւրաքանչիւր ընտանիքից մի դնաբ վճարելու պայմանով։

Իսկ Սայիֆ կը պատմէ, թէ Իյադ Ի. Ղանմ գնաց ալ-Քաքայի հետքերով, երբ Օմար գրեց Սադին, որ նա ուղարկէ ալ-Քաքային 4000 մարդուց բաղկացած գնդով Աբու Օբայդային օգնութեան. նորա ուղեւորեցան Միջագետք դէպի (Եփրատի) ակունքը։ Սուհայլ Ի. Ադիի իւր բանակով հասաւ Ռաքքայ։ Միջագետոց բնակիչք նմեսայում լսելով կուֆացիների մարձենալը՝ ցրուեցան իրանց գիւղերում։ Սուհայլ պաշարեց նոցա, մինչեւ նորա խաղաղութիւն կապեցին։ Այս ժամանակ Իյադ Միջագետոց Վասեթ քաղաքում էր։ Բնակիչք համաձայնեցան գլխահարկ վճարել։

Աբդուլլահ Ի. Խրան արշաւեց դէպի Տիգրիս, եկաւ Մոսուլ եւ անցաւ այնտեղից Մծբին. բնակիչք ընդունեցին նորան խաղաղութեամբ եւ այնպէս վարուեցան, ինչպէս եւ Ռաքքայի ժողովուրդը։

Երբ Ռաքքայի եւ Մծբինի բնակիչք հնազանդեցան, Իյադ առաւ իւր հետ Սուհայլին եւ Աբդուլլային, գնաց Խառան եւ յարձակեց ինչ որ նորա շրջակայքում գտաւ։ Երբ նա բնակիչաց մօտ եկաւ, նոքա հրաժարեցան նորան իրանց համաձայնութիւնն տալ գլխահարկի նկատմամբ։ Իյադ ընդունեց այս, իսկ ով որ համաձայնեցաւ, նա նորան մշտական հարկատու նշանակեց։

Իյադ ուղարկեց Սուհայլին եւ Աբդուլլային Ուռհայ։ Բնակիչք չհամաձայնեցան գլխահարկի վճարել. ցանկացողը նշանակեցաւ մշտական հարկատու։

(2646) Ի. ԽՀակ կը պատմէ, թէ 21 թ. Օմար Ի. Սադ Ենարին արշաւեց... Միջագետք, իսկ Մաւիայ՝ Անտիոքիայ եւ Կիլիկիայ. միեւնոյն

---

1 Այս եւ հետեւեալ հատուածքն Արարատեանի եւ Դարբանդի նուաճման մասին առաջ կը բերեմ քաղուածքն, ի բաց թողնելով ինչ ինչ հետաքրքրութիւնից զուրկ մանրամասնութիւններ։

digitised by A.R.A.R.@

թուին Աբու Հիշամ Ի. Օմրայ Ի. Ռաբիայ Ի. Աբդ-ալ-Շամս խաղաղութիւն հաստատեց Կիլիկիայի, Անտիոքիայի եւ Մասաւայ Մարբնի բնակչաց հետ։

Սարպատականի Նուաճումն։

(2647, 2660–64։)

Աբու Ջաֆար կը պատմէ, թէ Սարպատական նուաճեցաւ 22 թ. Նոյնպէս ինձ ասացեալ է Ահմէդ Ի. Ջաբիտ Սաուազի քսան խնամ Ի. Ալյիի, քսան Աբու Մաշարի՝ թէ Սարպատական նուաճեցաւ 22 թ., ուր կառավարեց Մուղիրայ Ի. Շուբայ. Նոյնն կը հաստատէ եւ Վակիդին։ Իսկ Սայֆի Ի. Օմար կը պատմէ, թէ այս դէպքը տեղի ունեցաւ 18 թ. Համադանի, Ռայի եւ Ջորջանի նուաճումից յետոյ։

Նուայմ՝ Հպատակեցնելով Համադան՝ արշաւեց Ռայ, որ Վաֆի-լ-Ռուդի մէջն է։ Օմար գրեց Նորան, որ նա Սիմակ Ի. Խարաշայ Անսարիին ուղարկէ Սարպատական՝ Բուկէյր Ի. Աբդուլլահին օգնութեան. Նուայմ սակայն սպասեց, մինչեւ գրաւեց Ռայ, ապա արձակեց Սիմակին, որ գնաց Բուկէյրի մօտ Սարպատական, երբ սա արդէն իւր արշաւանքն սկսել էր։ Երբ Բուկէյր Ջարմիդան մտաւ, Նորան դիմաւորեց Խֆանդիաբ Ի. Ֆառուխզատ՝ անցնելով Վաֆի-լ-Ռուդի. այս եղաւ առաջին ճակատը Սարպատականում. երկու զօրագնդերը իրարու բախեցան. Աստուած է փախուստ դարձրեց թշնամու զօրքը, եւ Բուկէյր գերեց Խֆանդիաբին, որի հետ միասին նա շրջից Նորա գաւառները, բաց ի ամրոցավայրերից։ Այս ժամանակ Նորան հասաւ Սիմակ Ի. Խարաշայ օգնական գնդով, Նուաճելով շրջակայ գաւառները, որպէս Օմրայ Ի. Ֆարքադ հնազանդեցրել էր իրեն ճանապարհի վերայ գտնուող երկրները։

Դորանից յետոյ Բուկէյր խնդրեց Օսմանին՝ իրեն արձակել պաշտօնից. Օմար տուեց իւր համաձայնութիւնն այն պայմանով, որ նա՝ նշանակելով իրեն փոխանորդ՝ արշաւէ Դարբանդ։ Բուկէյր գրեց Օմրային երկրի վերայ կուսակալ եւ՝ յանձնելով Նորան Խֆանդիաբին՝ ուղղակի գնաց Դարբանդ։ Օմրայ իւր կողմից նշանակեց Սիմակ Ի. Խարաշային կառավարիչ (երկրի մի մասի վերայ)։ Եւ այսպէս Օմար ամբողջ Սարպատական յանձնեց Օմրայ Ի. Ֆարքադին։

Բահրամ Ի. Ֆառուխզատ՝ դարձան մտնելով՝ իւր զօրքով սպասեց Օմրային ճանապարհին, մինչեւ նա մտնեցաւ. տեղի ունեցած ճակատամարտում Օմրայ ի փախուստ դարձրեց Բահրամին, որ ապրեցաւ փախստեամբ։

Երբ Օմրայի ձեռքն անցաւ Բուկէյրի իշխանութիւնն եւս, նա գրեց Սարպատականի բնակչաց հետեւեալ դաշնագիրը՝

"Յանուն Աստուծոյ ամենագթաւէտի եւ ամենաողորմածի. աստիկ այս պայմանները շնորհեց Օմրայ Ի. Ֆարքադ՝ Օմար Ի. Խաթթաբի կառավարիչը՝ Սարպատականի ժողովրդին՝ Նորա գաշտերի, լեռների, արօտատեղերի եւ տարուկների վերաբերմամբ, նաեւ կրօնաւորներին. բոլոր բնակչաց ապահովութիւն է տրուում՝ նոցա կեանքի, գոյքի, կրօնի եւ հաստատութեանց համար այն պայմանով, որ նոցանից ամէն մէկը գլխահարկ վճարէ քսան չափոյ իւր կարողութեան, բաց ի երեխաներից, կանանցից եւ չքաւորներից, որոնք աշխարհական ինչք չունին, եւ բաց ի կրօնաւորներից, որոնք աշխարհական գոյքից զուրկ են։ Այս արտօնութիւնք կը շնորհուին թէ երկրի բնիկ ժողովրդին եւ թէ նորա հետ բնակողներին, որոնք պարտաւոր են դիշեր եւ ցերեկ հիւրընկալել մուսլիմ զօրագնդերից անջատուած դիւնուորին եւ նորան ուղեցոյցներ տալ։ Ով տարուայ ընթացքում իւր խաչինքը ժամանակից կորցրեց, նա ազատ կը մնայ նոյն տարուայ հարկից։ Ով երկրի մէջ մնայ, նա կը վայելէ նոյն իրաւունքներն, որ եւ երկրի բնակիչք այսուհետեւ, իսկ ով հեռացաւ, Նորան ապահովութիւն կը տրուի, մինչեւ նա իրեն ապաստան գտնի։ Թուղթս գրեց Ջունդուբ, վկայ են Բուկէյր Ի. Աբդուլլահ Էյյիթի եւ Սիմակ Ի. Խարաշայ Անսարի. յամին 18։„

Դարբանդի Նուաճումն։

(V, 2663.)

Նոյն 22ոդ թ. Նուաճեցաւ Դարբանդ։

Սայֆի կը պատմէ, թէ Օմար ուղարկեց Սուրաքայ Ի. Ամրին՝ որ Զալ-Նուբ (Հրաւէր) կը կոչուէր Դարբանդ. նա գրեց առաջապահ գնդի վերայ Աբդուլլահման Ի. Ռաբիային (որ նմանապէս Զալ-Նուբ մականունն կը կրեր), մի թեւը յանձնեց Հուզայֆայ Ի. Ասիդ Ղիֆարին, իսկ միւսը՝ Բուկէյր Ի. Աբդուլլահ Էյյիթին. վերջինս Սուրաքայի նորա մտ գալուց առաջ Դարբանդի նուաճմամբ էր զբաղուած։ Սուրաքան գրեց Նորան՝ միանալ իւր հետ. աւարի վերայ գնելով Սալման Ի. Ռաբիային, նա առաջ ուղարկեց Աբդուլլահմանն Ի. Ռաբիային եւ հետեւեց Նորան, մինչեւ գուրս եկաւ Սարպատականից եւ հասաւ Բուկէյրի մտ Դարբանդի շրջակայքում. Նորա հետ միասին առաջ ընթանալով, Սուրաքան մտաւ Դարբանդի երկիրը Օմարի հրամանով, որ Նորան օգնութեան ուղարկեց Հաբիբ Ի. Մաալամային Միլիգաւեից։

(Շարունակելի։) Բ. ԽԱԼԱԹՅԱՆՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԱԿԱՆ — Արշակունի դրամներ — Նախարշակունիք եւ Հնազոյն արշակունիք եւ իրենց ծանօթ դրամները. 129։

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ — Ժողովրդական երգեցողութիւնը Ռուսահայոց մէջ. 137։

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ — Բժիշկ Դոկտ. Ստեփան Փաշա Ասլանեան. 142։

ԼԵԶՎԻԱԲԱՆԱԿԱՆ — Հայերէն եւ դրացի լեզուները. 150։— Ստուգաբանական հետազօտութիւնք. 158։

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ — Արարացի մատենագրեր Հայաստանի մասին. 159։

ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

Հ. ՌԱՖԱՅԷԼ Վ. ՊԱՐՈՆ Հ

ՎԻԵՆՆԱ, ՄԽԻԹԱՐԻԱՆ ՑՊԱՐԱՆ

digitised by A.R.A.R.@